Հաշվետվություն

Անունը, Ազգանունը

Միեր Գրիգորյան

Զբաղեցրած պաշտոնը

Փոխվարչապետ

Գործուղման վայրը և ժամկետները

Աստանա, Ղազախստանի Հանրապետություն, 21.06.18-22.06.18

Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Աստանա քաղաքում կազմակերպված Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԶԲ) խորհրդի նիստին:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Նիստի ընթացքում կայացել է ԵԱԶԲ վարչության նախագահի ընտրությունը, հաստատվել են ԵԱԶԲ վարչության 2017 թվականի տարեկան հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվությունը: Նիստի օրակարգում են եղել Բանկի 2017 թվականի եկամուտների բաշխման և ռեզերվային ֆոնդի ստեղծման, 2017 թվականին Բանկի վերահսկողական հանձնաժողովի հաշվետվության, 2017 թվականի Բանկի ներքին աուդիտի ծառայության հաշվետվության, այդ ծառայության աշխատակիցների պարգևատրման և լիազորությունների երկարացման, 2018-2022թթ Բանկի ռազմավարության հաստատման, Բանկի ղեկավարման համակարգի կատարելագործման, Բանկի վարչության նախագահի տեղակալների նշանակման, ԵԱԶԲ խորհրդի հաջորդ նիստի անցկացման ամսաթվի, տեղի և նախնական օրակարգի վերաբերյալ հարցերը և մի շարք այլ ընթացիկ հարցեր:

Փոխվարչապետ, Եվրասիական զարգացման բանկի խորհրդում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ Միեր Գրիգորյանը մասնակցել է գործնական ճաշի ԵԱԶԲ հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արմեն Մելկիկյանի, ԵԱԶԲ վարչության նախագահ Անդրեյ Բելյանինովի և ԵԱԶԲ վարչության նախագահի տեղակալ Մաքսիմ Կորժովի հետ: Գործնական ճաշի ընթացքում քննարկվել են ԵԱԶԲ կողմից Հայաստանում իրականացվող և իրականացվելիք ներդրումային ծրագրերը: Ներկայացվել է, որ Հայաստանում մասնավոր հատվածում իրականացվելիք ծրագրերի ընդհանուր գումարը ըստ Բանկ ներկայացված հայտերի 225 մլն ԱՄՆ դոլար է կազմում: Վերոնշյալ հայտերի շրջանակներում նախատեսվում է 2018-2019թթ. ֆինանսավորել մասնավոր հատվածի ծրագրերը գյուղատնտեսության, հեռահաղորդակցման, էներգետիկայի և ֆինանսական ոլորտներում:

Գործուղվողը

Միեր Գրիգորյան

Ամսաթիվը

25.06.18